

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2016թ. նոյեմբերի 2-4-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «ԲԶՄՀ առընչվող ցուցանիշների ինտեգրումը տարածաշրջանային և ազգային մակարդակով Կայուն զարգացման նպատակների դիտարկման և համապատասխանեցման գործընթացում» խորագրով տարածաշրջանային հանդիպմանը,
- ✓ 2016թ. նոյեմբերի 9-11ը ՀՀ ԱՎԾ շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը և տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար պաշտոնական վիճակագրության համար բիզնես հետազոտությունների մշակման և իրակացման վերաբերյալ դասընթացին,
- ✓ 2016թ. նոյեմբերի 15-16ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Պրահայում (Չեխիայի Հանրապետություն) կայացած Արևելյան համագործակցության Պլատֆորմ-2 ծրագրի շրջանակում կազմակերպված «Շուկայական տնտեսության անցումը և պահանջարկի կանխատեսումը. Չեխիայի Հանրապետության փորձը, դասերը և Արևելյան գործընկերները» խորագրով թեմատիկ հինգերորդ աշխատաժողովին,
- ✓ 2016թ. նոյեմբերի 14-18-ը ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Արդյունաբերության վիճակագրության արտադրանքի և ծառայությունների արդիականացում Կայուն զարգացման նպատակների շրջանակում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2016թ. նոյեմբերի 17-18-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Շրջակա միջավայրի վիճակագրության և ցուցանիշների միասնական նպատակային խմբի 12-րդ նստաշրջանին,

- ✓ 2016թ. նոյեմբերի 21-22-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Անկանոն միգրացիայի, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և ընդհանուր սահմանի կառավարման ոլորտներում միջսահմանային համագործակցության խթանման, ինչպես նաև Վրաստանում ներդրվող իմիգրացիոն տվյալների ազգային միասնական համակարգին ծանոթանալու նպատակով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2016թ. նոյեմբերի 21-22-ը ՀՀ ԱՎԾ որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը և որակի կառավարման բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել են ք. Քիշնևում (Մոլդովա) կայացած «Վիճակագրական մեթատվյալներ» խորագրով խորացված դասընթացին,
- ✓ 2016թ. նոյեմբերի 21-25-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության պետ Վ. Գևորգյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և նախագահի խորհրդական Կ. Ներսիսյանը մասնակցել են ք. Պրահայում (Չեխիայի Հանրապետություն) կայացած Աջակցություն Գյուղատնտեսական համատարած հաշվառմանը դրամաշնորհային ծրագրի երկկողմանի հանդիպումներին,
- ✓ 2016թ. նոյեմբերի 29-30-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած «Եվրոպայի Շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգ - II» ծրագրի ղեկավար կոմիտեի առաջին խորհրդակցությանը,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 6-7-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Երիտասարդությունը և գենդերային վիճակագրությունը» թեմայով աշխատանքային խորհրդակցությանը,

- ✓ 2016թ. դեկտեմբերի 6-9-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության վիճակագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխայանը և երկրորդ կարգի մասնագետ Ս. Ազատյանը մասնակցել են ք. Վիլնյուսում (Լիտվա) կայացած «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Ժողովրդագրության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում հանդիպմանը,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 12-15-ը ՀՀ ՎՊԽ խորհրդի անդամ Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջատար մասնագետ Կ. Ավետիսյանը մասնակցել են ք. Հռոմում (Իտալիա) կայացած «Մեծ տվյալների հասկացությունը և գործիքները» թեմայով դասընթացին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 14-17-ը ՀՀ ԱՎԾ ներքին աուդիտի վարչության պետ Ա. Մանանդյանը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Պետական ներքին ֆինանսական հսկողության բարեփոխումների առաջընթացը» թեմայով միջազգային համաժողովին և «Հանրային հատվածի ներքին աուդիտում որակի ապահովում/երաշխավորում» թեմայով վերապատրաստմանը,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Եվրասիական տնտեսական միության վիճակագրական գործունեության արդիական հարցեր» խորագրով Եվրասիական տնտեսական միության ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների նիստին: